ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
<<ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

Ս. Վարդանյան 2, Հեռ. (+374 222) 65 440 , էլ.փոստ byureghavan2@schools.am

15.09.2022թ. N 138

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Տեղեկացնում եմ Ձեզ, որ Բյուրեղավանի հիմնական դպրոցում 2022 թ-ի սեպտեմբերի 30-ին ժամը 14:00-ին տեղի կունենան դասվարի (13 դասաժամ), ֆիզկուլտուրայի (9 դասաժամ), պատմության (14 դասաժամ) ուսուցիչների թափուր տեղերի մրցույթներ:

Առդիր՝ 1 էջ:

Հարգանքով՝ Մ. Սարգսյան

Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Բյուրեղավանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (13 դասաժամ), ֆիզկուլտուրայի (9 դասաժամ), պատմության (14 դասաժամ) ուսուցիչների թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թ-ի սեպտեմբերի 14-ից մինչև 28-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը **09:00-ից 15:00-ը**, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. սեպտեմբերի 30-ին՝ ժամը 14:00-ին, Կոտայքի մարզի Բյուրեղավանի հիմնական դպրոցում: Հասցեն՝ ք. Բյուրեղավան, Ս.Վարդանյան 2:** Տեղեկությունների համար զանգահարել **(0222) 6-54-40** հեռախոսահամարով: